ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

06-ը ապրիլի 2021 թ.

1. **ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2021 թվականի առաջին եռամսյակի կատարման մասին:**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2021թ. ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 69.5 %-ով, նախատեսված 766692.7 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 532486.3 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 234206.4 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2021թ. բյուջեների երեք ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2021թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	110685.6	27358.8	- 83326.8	24.7
Գույքահարկ	330615.4	257236.6	- 73378.8	77.8
Պետական տուրք	12448.4	13132.1	+ 683.7	105.5
Տեղական տուրք	33152.7	31119.2	- 2033.5	93.9
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	95316.5	53489.4	- 41827.1	56.1
ա/ հողի վարձավճար	80305.1	40543.6	- 39761.5	50.5
բ/ գույքի վարձավճար	15011.4	12945.8	- 2065.6	86.2

Այլ եկամուտներ	184474.1	150150.3	- 34323.8	81.4
Ընդամենը սեփական եկամուտներ	766692.7	532486.3	- 234206.4	69.5

2021թ. երեք ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2020թ. համեմատությամբ կազմում է 2.6 % կամ ավել է հավաքագրվել 13350.2 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2020թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Ախուրյան այդ թվում՝	194069.4	81461.7	- 112607.7	42.0
1.1	Ախուրյան	91016.7	34676.3	- 56340.3	38.1
1.2	Մարմաշեն	67500.9	16433.7	- 51067.2	24.3
2	Աշոցք այդ թվում՝	31440.2	19059.6	- 12380.6	60.6
2.1	Աշոցք	19975.2	13821.0	- 6154.2	69.2
2.2	Սարապատ	11465.0	5238.7	- 6226.3	45.7
3	Ամասիա այդ թվում՝	19637.4	13817.3	- 5820.1	70.4
3.1	Ամասիա	9555.2	9394.9	- 160.3	98.3
3.2	Արփի	10082.2	4422.4	- 5659.8	43.9
4	Արթիկ	90676.4	68883	- 21793.4	76.0
5	Անի	35103.3	30206.1	- 4897.2	86.0

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2021թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Մարմաշեն խոշորացված համայնքում՝ 24.3%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 100.8% կամ նվազման տոկոսը կազմում է 76.5, գումարային նվազումը կազմել է 11612.3 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2021թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 80.6%, **Արթիկ** քաղաքը՝ 91.8%:

Մարզի թվով 21 համայնքներ չեն ապահովել 2021թ. երեք ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 69.5%-ը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2021 թվականին երեք ամիսներին նախատեսված 1624580.4 հազ. դրամ <<Դոտացիան>> ամբողջությամբ ֆինանսավորվել է:

2. **ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2021 թվականի աշխատանքային ծրագրի, առաջին եռամսյակում կատարված հսկողության արդյունքների և մարզի ՏԻ մարմինների կողմից իրականացվող այլ գործառույթների մասին:**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1776-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրին համապատասխան, 2021 թվականի ընթացքում մարզի թվով 14 համայնքներում իրականացվելու է իրավական և մասնագիտական հսկողություն:

2021 թվականի 1-ին եռամսյակում մարզի **Գյումրի, Հոռոմ և Հայկավան** համայնքներում արդեն իսկ ավարտվել են իրավական հսկողության աշխատանքները և ներկայում աշխատանքային խմբերի կողմից ամփոփվում են արձանագրված թերություններն ու խախտումները:

Իրավական հսկողության աշխատանքներն իրականացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով հաստատված հարցաշարերին համապատասխան:

Մասնավորապես, ուսումնասիրվում են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման օրինականությունն ու արդյունավետությունը, համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության,

հողօգտագործման, պաշտպանության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջապահության, սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, շրջակա միջավայրի պահպանության և զբոսաշրջության բնագավառներում:

Համայնքներում իրականացված իրավական հսկողության արդյունքներով համայնքների ղեկավարներին կներկայացվեն համապատասխան գրավոր առաջարկություններ հայտնաբերված խախտումները վերացնելու, դրանք համայնքի ավագանու առաջիկա նիստի օրակարգ ընդգրկելու, քննարկելու և արձանագրված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ Շիրակի մարզպետարան ստացվել են մարզի համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների կողմից ընդունված **619** որոշումներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան ուսումնասիրվել են առաքված բոլոր որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Համայնքների ավագանիների կողմից ընդունված թվով **429** որոշումներից **184-ը (42.9%)** համապատասխանել են ՀՀ օրենսդրությանը, իսկ թվով **245 (57.1%)** ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են համապատասխան առարկություններ և առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին:

Ներկայացված առարկությունները քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, դրանք ընդունվել են ամբողջությամբ, օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրավական ակտերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը և արդյունքների մասին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել է տեղեկատվություն:

Չնայած նախորդ տարիների համեմատությամբ, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացում առկա են էական բարելավումներ, այնուամենայնիվ դեռևս առկա են նմանօրինակ և կրկնվող թերությունները: Շատ դեպքերում հողումները կատարվում են թերի, ոչ լիարժեք, մեծ թիվ են կազմում օրենսդրական տեխնիկայի կանոններին չհամապատասխանող որոշումները: Մի շարք դեպքեր են արձանագրվել նաև, երբ հողումները կատարվել են ուժը կորցրած իրավական ակտերին: Արձանագրվում են դեպքեր, երբ ընդունված որոշումները մարզպետարան են առաքվում օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ: Կան նաև համայնքներ, որոնք թերանում և ընդունված ոչ բոլոր որոշումներն են առաքում մարզպետարան:

Ելնելով վերը նշվածներից, համայնքների ղեկավարներին **առաջարկում ենք՝** ամենօրյա աշխատանքներ տանել համայնքապետարանների աշխատակազմերում իրականացվող գործավարության և փաստաթղթաշրջանառության ուղղությամբ տարվող գործընթացների բարելավման ուղղությամբ, ավագանու նիստերը հրավիրել օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ապահովել նիստերի հրավիրման ժամկետների և օրակարգային հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հրապարակայնությունը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված բոլոր որոշումների առաքումը մարզպետարան, ինչպես նաև դրանց վերաբերյալ մարզպետարանի կողմից ներկայացված առարկություններին պատասխանել սահմանված կարգով և ժամկետներում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում 2021 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի **թվով 6** (Գյումրի, **Արթիկ** Ախուրյան, Գեղանիստ, Փոքր Մանթաշ և Ղարիբջանյան) համայնքների ղեկավարների կողմից թվով **29** համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման համար հայտարարվել են մրցույթներ: Ապահովվել է թափուր պաշտոնների մրցույթների հայտարարությունների հրապարակայնությունը, դրանք տեղադրվել են ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am, համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերում, փակցվել են համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներին: Ընդհանուր թվով **29** թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներից կայացել են **16-ը** (Գյումրի, Գեղանիստ): Անցկացված մրցույթների արդյունքների և մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ապրիլի 13-ից մինչև մայիսի 4-ը ընկած ժամանակահատվածում մարզի **4** համայնքներում (Արթիկ, Ախուրյան, Փոքր Մանթաշ և Ղարիբջանյան) կայանալու են թվով **13** թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներ:

2021 թվականի 1-ին կիսամյակում նախատեսված են մարզի համայնքապետարանների համայնքային ծառայողների, ինչպես նաև համայնքների ղեկավարների և ավագանու անդամների վերապատրաստումներ: Արդեն իսկ կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել վերապատրաստման ենթակա թվով 141 համայնքային ծառայողների ցուցակները:

2021 թվականի ընթացքում լրանում է մարզի թվով **38 համայնքների** ՏԻ մարմինների լիազորությունները և ընտրությունների նշանակման համար խոչնդոտներ չլինելու դեպքում **թվով 6 համայնքներում** անցկացվելու են **միայն համայնքի ավագանու, 19 համայնքներում համայնքների ղեկավարների և ավագանու անդամների, իսկ 10 համայնքներում ավագանու անդամների հերթական ընտրություններ:**

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվի առնելով, որ ջերմաստիճանի բարձրացման կամ գարնանային հորդառատ անձրևների արդյունքում կարող են առաջանալ ջրային հոսքի զգալի ծավալներ, որի հետևանքով հնարավոր են ջրածածկումների ու ողողումների առաջացումը, անհրաժեշտ է պատրաստի վիճակի բերել համայնքային քաղաքացիական պաշտպանության կազմավորումները, արագ արձագանքման խմբերն ու ինժեներական տեխնիկան, ինչպես նաև ունենալ պահուստային վառելիք՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման նպատակով, համայնքապետարաններում սահմանել հերթապահություն, հնարավոր հեղեղումների և ձեռնարկվելիք առաջնահերթ քայլերի մասին իրազեկել համայնքների բնակչությանը, մշտական կապ պահել մարզպետարանի և փարկարար ծառայության Շիրակի մարզային ստորաբաժանման պատասխանատուների հետ:

Ձեզ արդեն իսկ ուղարկվել է ՀՀ Շիրակի մարզպետի 12 մարտի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2021 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» N 73-Ա որոշումը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2021 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների» ծրագիրը, որով նախատեսված է մարզի **10 համայնքների թվով 61 բնակավայրերում** իրականացնել համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ՝ մասնավորապես գետերի, հեղեղատարների և սելավատարների հուների առավել վտանգավոր հատվածների մաքրում, ափապաշտպան կառույցների ամրացում: Տեղեկացնում եմ, որ մարզի 2 համայնքներում արդեն իսկ ունեցել ենք ողողումների դեպքեր:

Կարևորելով քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության ազդարարումը, ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների հետ համատեղ աշխատանքների արդյունքում աշխատանքային վիճակում գտնվող շչակների թիվը 25-ից հասցվել է 65-ի, որոնք տեղադրված են 42 համայնքների թվով 44 բնակայրերում: Սակայն առկա քանակը դեռևս բավարար չէ, և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել մարզի բոլոր բնակավայրերում ազդարարման համակարգեր ունենալու ուղղությամբ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի ռազմական ոստիկանության և ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում ապահովվել է 2020 թվականի ձմեռային զորակոչի կազմակերպումն ու անցկացումը: Պատշաճ կարգով կազմակերպվել և անցկացվել են նաև մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերը: Նիստերի ընթացքում քննարկվել են տարկետման ներկայացված թվով 145 զորակոչիկների անձնական գործեր, իսկ կազմված եզրակացությունները սահմանված կարգով ու ժամկետներում ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

Համապատասխան հսկողություն է սահմանված նաև այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների կողմից կատարվող աշխատանքները և ծառայությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ: Ներկայում մարզում այլընտրանքային աշխատանքային ծառայություն են անցնում **4 քաղաքացիներ**:

Մարզխորհրդի հարգելի մասնակիցներ, 2-րդ Արցախյան պատերազմի ընթացքում և հետպատերազմական ժամանակահատվածում մեր կողմից ահրաժեշտ աշխատանքներ են տարվել զոհված զինծառայողներին մարզ տեղափոխելու, սգո ծառայությունների և հուղարկավորությունների կազմակերպումն ապահովելու ուղղությամբ: Նշված աշխատանքների պատշաճ կազմակերպումն ապահովվել է մարզի բոլոր համայնքների ղեկավարների գործուն մասնակցության, ինչպես նաև ոստիկանության, ճանապարհային ոստիկանության աշխատակիցների, Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիայի անձնակազմի, շտապ բուժօգնության կայանի և Շիրակի կայազորի N զորամասերի հետ փոխհամաձայնեցված աշխատանքների արդյունքում:

Ներկայում ընթացքի մեջ են ՀՀ Շիրակի մարզի բնակիչ համարվող, 2-րդ Արցախյան պատերազմի հետևանքով զոհված և վիրավոր դարձած զինծառայողների սոցիալական աջակցության կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթների կազմման աշխատանքները, որոնք սահմանված կարգով ներկայացվում են ՀՀ պաշտպանության նախարարություն:

3. ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և առաջիկա ծրագրերի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Անդրանիկ Նալբանդյան

2021թ. բերքի տակ կատարվել է 14936 հա աշնանացան ցորենի ցանք, որը նախորդ տարվանից ավել է 134 հա-ով: Ձմեռացման ընթացքում աշնանացան ցորենի ցանքատարածությունների ցրտահարության դեպքեր չեն գրանցվել: Նշված ցանքատարածությունից շուրջ 3000 հա-ը իրականացվել է «Աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության» ծրագրով ձեռք բերված էլիտա և առաջին վերարտադրության սերմացուներով:

Մարզում արդեն սկսվել են գարնանացանի աշխատանքները, որի համար ՀՀ կառավարության կողմից իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի արտադրության խթանման» պետական աջակցության ծրագիրը: Ներկայումս մատակարարների կողմից իրականացվում է սերմացուների տրամադրումը շահառուներին:

Աշնանացանի և գարնանացանի աջակցության ծրագրերին զուգահեռ իրականացվում են նաև գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրեր՝

1) ***«Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր***

Մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, տրամադրվող վարկերը շահառուներին 3-15 մլն դրամ հասանելի կլինի 0 % տոկոսադրույքով:

0 % տոկոսադրույքով կտրամադրվի նաև 3-30 մլն դրամ ոչխարաբուծության, այծաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության զարգացման ու ավանդական այգու հիմնման համար, իսկ տավարաբուծության զարգացման համար՝ 3-50 մլն դրամ:

Շարունակվում են նաև.

2) *«2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագիր*
3) *«2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության» ծրագիր*
4) *««Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիր*
5) *«Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագիր*
6) *«Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագիր*
7) *«Կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման» ծրագիր*
8) *«Ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագիր*
9) *«Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր*
10) *«Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր*
11) *«Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր*
12) *«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիր*

2021 թվականի գյուղատնտեսական տարվա համար ընդլայնվել է ապահովագրվող մշակաբույսերի ցանկը՝ ներառելով նաև կարտոֆիլը:

Մարզում «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ իրականացվելու է համայնքային անտառների հիմնման աշխատանքներ Գյումրի, Ախուրյան, Աշոցք, Մարմաշեն, Ամասիա, Անի և Լեռնակերտ համայնքներում:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ իրականացված գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները կազմել են խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 90 879 գլուխ, որը ավել է նախորդ տարվանից 3 784 գլխով, խոզ՝ 18 904 գլուխ, որը նախորդ տարվա համեմատ

պակասել է 4 772 գլխով, մանր եղջերավոր կենդանիներ՝ 74 986 գլուխ, որը ավել է նախորդ տարվանից 8 540 գլխով և 215 667 թև թռչուն, որը պակաս է նախորդ տարվանից 14 430 թևով:

Ոռոգում.

2021թ. մարզի ջրամբարներում, բացի Ախուրյանի և Կառնուտի ջրամբարներից, նախորդ տարվա նուն ժամանակահատվածի հետ համեմատած ավելի շատ ջուր է կուտակվել:

«Շիրակ» ՋՕԸ կողմից ներկայումս իրականացվել է 6.6 կմ երկարությամբ ոռոգման ցանցի և 3 ՀՏԿ-ների նորոգման աշխատանքներ: Նախատեսված է իրականացնել նաև՝ 2.5 կմ ոռոգման ցանցի նորոգում, 406 կմ ոռոգման ցանցի մաքրում, 30 ՀՏԿ-ների և 14 պոմպերի նորոգման աշխատանքներ:

Բնապահպանություն.

Անցած ժամանակահատվածում որոշակի աշխատանքներ են իրականացվել Շիրակի մարզի շրջակա միջավայրի և նրա առանձին տարրերի բարելավման ուղղությամբ, որի նպատակով մարզում իրականացվել և ընթացքի մեջ են էկոլոգիական իրավիճակի բարելավման մի քանի ծրագրեր, որի շրջանակներում 2021թ. ևս մարզում կիրականացվի համայնքային անտառների հիմնման և անտառվերականգնման աշխատանքներ՝ միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցների ֆինանսավորմամբ:

Մասնավորապես «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ իրականացվելու են համայնքային անտառների հիմնման աշխատանքներ մարզի Գյումրի, Ախուրյան, Աշոցք, Մարմաշեն, Ամասիա, Անի և Լեռնակերտ համայնքներում:

Լայնածավալ կանաչապատման և անտառտկնման աշխատանքներ են իրականացվելու նաև «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում:

Ընթացքի մեջ է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի հարմարվողականության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արթիկ քաղաքի փակված քարհանքերի տարածքում անտառաշերտերի ստեղծման և հեղեղատարների մաքրման» պիլոտային ծրագիրը, որի շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է իրականացնել հանգստի գոտու և անտառպուրակի հիմնման աշխատանքները:

Ջրամբարների լցվածությունը 30.03.2021 թվականի դրությամբ

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 30.03.2020թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 30.03.2021թ. /մլն մ³/	Աճ/նվազում +/- /մլն մ³/
1	**Ախուրյան**	525,0	273,59	202,83	-70,8
2	**Արփի լիճ**	105,0	8,3	33,4	25,10
3	**Կառնուտ**	22,60	6,80	2,89	-3,91

4	**Սառնաղբյուր**	4,80	0,31	0,70	0,39
5	**Վարդաքար**	5,0	1,12	1,88	0,76
6	**Թավշուտ**	6,0	0,25	0,28	0,03
7	**Մանթաշ**	8,20	2,07	3,36	1,29
8	**Ջաջուռ**	0,28	0,22	0,17	-0,05
Ընդամենը		**151,88**	**19,07**	**42,68**	**23,61**

Լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓ ՏԵՍՔՈՎ ԲԵՐՎՈՒՄ Է ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ /2020-2021ԹԹ./

	2020թ.	2021 թ.	Աճ/նվազում (+/-)
Խ.ե.կ./հազ. գլուխ/	87 095	90 879	+3784
Որից՝ կովեր/հազ. գլուխ/	40 986	42 761	+1775
Խոզեր/հազ. գլուխ/	23 676	18 904	-4772
Ոչխարներ և այծեր/հազ. գլուխ/	66 446	74 986	+8540
Թռչուններ, /հազ. թև/	230 097	215 667	-14 430

4. ՀՀ Շիրակի մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ Զորիկ Խաչատրյան

Համաձայն 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված մարզի հողային հաշվեկշռի մարզի մարզի վարչական տարածքը կազմում է **268 027** հա, որն ամբողջությամբ ընդգրկված է մարզի համայնքների վարչական սահմաններում:

Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **210874,0 հա:** Նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի կազմը էական փոփոխությունների չի ենթարկվել: Նվազել է ընդամենը 2.82

հեկտարով, որը պայմանավորված է եղել 1.73 հեկտարը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կատեգորիա փոխադրմամբ, իսկ 1.09 հեկտարը՝ Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա:

Մարզի **210874,0 հա** գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի ունի հետևյալ բաշխվածությունը՝

- վարելահողեր՝ **78 135.5** հա (տեսակարար կշիռը՝ **37.05 %**),
- բազմամյա տնկարքներ՝ **63.8** հա (տեսակարար կշիռը՝ **0.03** %), որը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է **4.0** հա-ով,
- խոտհարքներ՝ **9 702.5** հա (տեսակարար կշիռը՝ **4.6** %),
- արոտներ՝ **112 067.1** հա, (տեսակարար կշիռը՝ **53.1** %),
- այլ հողատեսքեր՝ **10 905.1** հա (տեսակարար կշիռը՝ **5.17** %),

Համայնքների վարչական սահմաններում առկա համայնքի և պետության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **148 296.3 հա** (տեսակարար կշիռը՝ **70.3 %**), որն ունի հետնյակ բաշխվածությունը՝

- վարելահողեր՝ **18434,6** հա (տեսակարար կշիռը՝ **12.4 %**),
- բազմամյա տնկարքներ՝ **50,3** հա (տեսակարար կշիռը՝ **0.034** %),
- խոտհարքներ՝ **7092,1** հա (տեսակարար կշիռը՝ **4.8** %),
- արոտներ՝ **111852,5** հա, (տեսակարար կշիռը՝ **75.4** %),
- այլ հողատեսքեր՝ **10866,8** հա (տեսակարար կշիռը՝ **7.3** %)

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **111 914.6** հա, որի տեսակարար կշիռը գյուղյատնտեսական նշանակության հողերի կազմում՝ **75.47 %** է, իսկ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ **36 381.7** հա, որի տեսակարար կշիռը գյուղ. հողերի կազմում՝ **24.53 %** է:

2021 թվականի ապրիլի 1-ի դրությամբ մարզի համայնքների վարչական տարածքներում առկա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող և վարձակալության ենթակա **118944.6** հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված **49 850.1** հեկտար (**41.9 %)՝ 201 մլն 555 հազ. դրամ տարեկան վարձավճարով**: Վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության 1 հա հողամասի միջին վարձավճարը կազմում է **4050** դրամ:

Համայնքների վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականության **105893.6** հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված **31990.3** հեկտարը (**30.2 %),** իսկ պետական սեփականության **31630.7 հա** հողերից՝ **17859.9 հա-ը (56.5 %)**:

	Հողատեսքը	Ըստ հողային հաշվեկշռի (հա)	Համայնքային և պետական սեփականության հողեր			Համեմատությունը 2019 թ. նկատմամբ	
			Տրամադրված է օգտագործման (հա)	Տեսակարար կշիռը հողերի կազմում (%)	Տրամադրված չէ օգտագործման (հա)	2019թ. տրամադրված օգտագործման (հա)	Տարբերու-թյունը (-, +)
1	Վարելահող	18434.6	13144.5	71.3	5290.1	13054.9	+89.6
2	Խոտհարք	7092.1	4249.2	59.9	2842.9	4217.6	+31.6
3	Արոտ	111852.5	32456.4	29.0	79396.1	32378.0	+78.4
Ընդամենը մարզում		118944.6	49850.1	41.9	69104.5	49650.5	+199.6

2019 թվականի համեմատությամբ վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողերն ավելացել են **199.6** հեկտարով, որի արդյունքում 2019 թվականի համեմատությամբ մարզի համայնքների բյուջեներում ամրագրված հողի վարձակալական վճարներից եկամուտներն ավելացել են: Վերջին երեք տարիներին նկավում է գյուղատնտեսական նշանակության հողերի վաձակալության տրամադրման դինամիկ աճ **(15.8 %):**

Չնայած ներկայացված թվային տվյանների դրական տեղաշարժին, պետք է խոստովանել, որ հողերի օգտագործման նշված մակարդակը դեռևս հեռու է բավարար լինելուց և խոսում է ՀՀ հողային օրենսդրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների դեռևս ոչ լիարժեք և արդյունավետ իրականացնելու մասին:

Այսպես, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված է **90 879** գլուխ խոշոր և **72 386** գլուխ մանր եղջերավոր անասուններ: Նշված գլխաքանակի արածեցման համար ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին» N 389-Ն որոշմամբ հաստատված նորմերի համաձայն անհրաժեշտ է առնվազն **100000** հա արոտ, այսինքն անհրաժեշտ է ավելի շատ արոտներ քան առկա է մարզի համայնքների վարչական տարածքներում: Նշվաշ փոստը ենթադրում է, որ նշված գլխաքանակի արածեցման համար արոտները պետք է վարձակալության տրամադրված լինեն ամբողջությամբ:

Մինչդեռ, մարզում առկա **111852.5** հա արոտներից, ինչպես նշեցի, վարձակալության է տրամադրված միայն **32456.4** հեկտարը **(29.0 %)**: Այսինքն արոտների հիմնական մասը մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվում են առանց վարձակալության պայմանագրերի և այդ հողօգտագործումից համայնքային բյուջեները եկամուներ չեն ստանում:

Համայնքների ղեկավարները մեր կողմից բազմիցս տեղեկացվել են, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի **«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին»** թիվ 1477-Ն որոշմամբ պետական և համայնքային սեփականության արոտների և խոտհարքների օգտագործման տրամադրման կարգը պարզեցվել է և համայնքների ղեկավարներին հնարավորություն է տրվել համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու պայմանագրերը կնքել պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով: Այսինքն, նման դեպքերում հողօգտագործման պայմանագրերի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար պահանջներ չեն ներկայացվում: Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Մարզի համայնքների վարչական սահմաններում առկա և օգտագործման չտրամադրված մոտ **80 հազար** հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության տրամադրվելու դեպքում, ըստ մոտավոր հաշվարկների համայնքների բյուջեներին կարող է ապահովել շուրջ **150-180** մլն դրամ եկամուտ, որը կարող է նպատակաուղղվել համայնքերի զարգացման ծրագրերով նախատեսված սոցիալական և տնտեսական տարբեր խնդիրների լուծմանը:

Առանձին համայնքներում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ թվում նաև վարելահողերը, վարձակալության են տրամադրված մասնակիորեն, իսկ մնացած հողամասերի օգտագործման տրամադրման համար պարբերաբար մրցույթներ չեն կազմակերպում և լիարժեք ու արդյունավետ հողօգտագործում ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվում:

<u>Հողի վարձակալական վճարների հավաքագրում</u>

2020 թվականին մարզի համայնքների բյուջեներին ամրագրված **369մլն 306 հազ. դրամ** հողի և գույքի վարձակալական վճարների դիմաց փաստացի հավաքագրվել է **276 մլն 590 հազ. դրամ**, կատարման ցուցանիշը՝ **74.9 %:** Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է հավաքագրվել **37 մլն. 305 հազ. դրամ** հողի և գույքի վարձավճար կամ նախորդ տարվա փաստացի հավաքագրվածի նկատմամբ ցուցանիշը նվազել է **15.7 %**-ով:

Ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում համայնքների բյուջեներին ամրագրված **95 մլն 316 հազ. դրամ** հողի և գույքի վարձակալական վճարների դիմաց փաստացի հավաքագրվել է **53 մլն 489 հազ. դրամ**, կատարման ցուցանիշը՝ **56.1 %, պակաս է հավաքագրվել 41 մլն 827 հազ. դրամ:**

Իսկ հողի վարձակալական վճարների գծով մարզի համայնքների բյուջեներին ամրագրված **80մլն 305 հազ. դրամ** հողի վարձակալական վճարների դիմաց փաստացի հավաքագրվել է **40մլն 544 հազ. դրամ**, կատարման ցուցանիշը՝ **50.5 %, պակաս է հավաքագրվել 39մլն 762 հազ. դրամ:**

Ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում հողի և գույքի վարձակալական վճարների պլանային ցուցանիշի նկատմամբ պակաս հավաքագրված գումարից **12.4 մլն** դրամը առաջացրել է Գյումրի համայնքը, **4.3 մլն. դրամը** Մարմաշեն համայնքը, **1.8 մլն. դրամը** Ախուրյան համայնքը, **2.1 մլն.** դրամը՝ Արփի համայնքը և **1.7 մլն. դրամը**՝ Սարապատ համայնքը:

Մարզի համայնքներից 100 և բարձր տոկոսի ցուցանիշներ են ապահովել Ազատան, Առափի, Գետք, Արթիկ, Ոսկեհասկ, Հայրենյաց, Սարալանջ, Սպանդարյան, Փանիկ և Ամասիա համայնքները:

Իսկ մարզի թվով 18 համայնքներ ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում չեն ապահովել վարձակալական վճարների հավաքագրման առաջադրանքի մինչև 50%-ը:

Համայնքների ղեկավարների ուշադրությունն ուզում եմ հրավիրել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված հողամասի վարձակալության մասին պայմանագրի 11-րդ կետի վրա, համաձայն որի «**Վարձակալման ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Նույն պայմանագրի 22-րդ կետի համաձայն պայմանագիրը կարող է վարձատուի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝ վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը:**

Առաջարկում եմ համայնքների ղեկավարներին, ոչ բարեխիղճ վարձակալների նկատմամբ կիրառել ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված վերը նշված լիազորությունները, վաղաժամկետ միակողմանի դադարեցնել պայմանագրերը և դրանք մրցույթով տրամադրել այլ հողօգտագործողների:

ՈՒզում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում և ենթաօրենսդրական այլ ակտերում վերջին ժամանակաշրջանում իրականացված փոփոխություններին ու լրացումներին, որոնք հիմնականում միտված են հողային հարաբերությունների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, հողերի օտարման և վարձակալության գործընթացների հրապարակայնության ու թափանցիկության ապահովմանը, ինչպես նաև հողերի կադաստրային արժեքները շուկայական արժեքներին մոտարկելուն:

Կատարված փոփոխությունների ոչ պատշաճ ապահովումը կարող են հիմք հանդիսանալ հողերի շրջանառության արդյունքում հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումները կասեցնելու համար:

- «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածում կատարված լրացումների համաձայն, համայնքի ղեկավարը մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը, որը պարտադիր կարգով ենթակա է հրապարակման:

- Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասում կատարված փոփոխության համաձայն, աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից, նախկինում սահմանված 50 տոկոսի փոխարեն, իսկ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, ծայրամասային բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 50 տոկոսից, նախկինում սահմանված 30 տոկոսի փոծարեն։

Իսկ Հայաստանի Հանրապետության բնակավայրերի դասակարգումը ըստ բարձունքային նիշերի սահմանված՝ ՀՀ կառավարության 1998 թ. նոյեմբերի 27-ի N 756 որոշմամբ, համաձայն որում կատարված փոփոխությունների՝ լեռնային բնակավավայերը դասակարգված են 2 բարձունքային նիշերով /1500-1700 և 1700-2000մ/։ Իսկ բարձրլեռնային համայնքները մեկ բարձունքայի ննիշով ՝ 2000մ. և ավելի։

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասում կատարված փոփոխության համաձայն, հողերի աճուրդի կազմակերպիչը համայնքի ղեկավարն է: Հողամասի աճուրդը կազմակերպելու համար աճուրդի կազմակերպիչն իր իրավասության շրջանակում ստեղծում է աճուրդային հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ: Աճուրդի կազմակերպիչը աճուրդային հանձնաժողով ստեղծելու որոշմամբ հանձնաժողովի կազմից նշանակում է աճուրդավար և արձանագրող:

68-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն՝ Աճուրդն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկ կամ ավելի է:

Իսկ 69-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդի մասնակցության համար հայտ չի ներկայացվել, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Այսինքն վերացվել է աճուրդին առնվազն երկու անձի մանակցության պարտադիր մասնակցության օրենսդրական պահանջը։

- Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում կատարված փոփոխության համաձայն, հողամասը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար համայնքի ավագանին ստեղծում է մրցութային հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ: Համայնքի ավագանին մրցութային հանձնաժողով ստեղծելու որոշմամբ հանձնաժողովի կազմից նշանակում է աճուրդավար և արձանագրող:
- Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում կատարված լրացման համաձայն մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝

http://www.azdarar.am, ինչպես նաև համապատասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքերում հանձնաժողովը տեղեկատվություն է հրապարակում մրցույթի մասին:

Ինչպես գիտեք ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ փոփոխվել են **ՀՀ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները:**

Իրավական ակտի կիրարկման կապակցությամբ հայտարարություն է հրապարակել ՀՀ կադաստրի պետական կոմիտեն, որում ասվում է.

- **Եթե սեփականության իրավունքով քաղաքացիները և իրավաբանական անձինք ունեն օրենքի ուժով անհատույց փոխանցված հողամաս, որի օտարման դեպքում առկա է կադաստրային արժեքի վճարման պայման, ապա մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը համապատասխան համայնքային բյուջե կարող են վճարել նախկին կադաստրային արժեքներով հաշվարկված գումար և հետագայում ազատվել օտարման պահին գործող ավելի բարձր կադաստրային արժեք վճարելուց:**

- **Եթե ինքնակամ կառույցի օրինականացման համար համայնքի ղեկավարին դիմել են մինչեւ 2021 թվականի հունվարի 31-ը և այդ դիմումի հիման վրա համայնքի ղեկավարը կընդունել է բարենպաստ վարչական ակտ, ապա ինքնակամ կառույցները և դրանց համար սահմանված կարգով առանձնացված հողամասերը տվյալ անձին կօտարվեն մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով (նախկին գործակիցներով և կադաստրային արժեքներով):**

- **Եթե պետական կամ համայնքային հողամասերի ուղղակի վաճառքի համար անձը դիմել է մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 15-ը, կամ համայնքի ղեկավարի կամ Կառավարության որոշումը ընդունվել է մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը, ապա այդ հողամասերը կօտարվեն տվյալ անձանց մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող կադաստրային արժեքներով:**

- **Եթե հողամասի նպատակային նշանակությունը սահմանված կարգով փոփոխելու նպատակով մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 15-ը դիմել են համայնքի ղեկավարին և այդ դիմումի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է բարենպաստ վարչական ակտ, և եթե փոփոխման արդյունքում առաջանում է հողամասի կադաստրային արժեքների տարբերության վճարման պահանջ, ապա հողամասի կադաստրային արժեքների տարբերության հաշվարկը կկատարվի մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող կադաստրային արժեքներով:**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակվել է «Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արոտների և խոտհարքների կառավարման գործընթացների կազմակերպման վերաբերյալ մեթոդական ուղեցույց», որը շրջաբերական գրությամբ ուղարկվել է Ձեզ՝ ի ղեկավարություն:

Ուղեցույցի նպատակն է բնական կերհանդակների կառավարման հետ կապված իրավահարաբերությունները սահմանող ՀՀ օրենսդրության և տեղական ինքնակառավարման բնագավառի օրեսդրության գործող կարգավորումների համատեքստում ներկայացնել համայնքների ՏԻՄ-երի կողմից պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարման գործընթացները կազմակերպելու և իրականացնելու իրավական և իրավակիրառական քայլերն ու գործողությունները, ինչպես նաև արոտավայրերի և խոտհարքների օգտագործման նկատմամբ ՏԻՄ-երի վերահսկողական բնույթի լիազորությունները՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց տնօրինմանը՝ սեփականությանը հանձնված արոտավայրերի և խոտհարքների օգտագործման մասով:

5.ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման ու ներկայացման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բաղիշյան

ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման ու ներկայացման կարգը:

Համաձայն 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 292-Ն Կառավարության որոշմամբ կատարվել է «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ, մասնավորապես՝

- Սուբվենցիայի հայտը տեխնիկական բնութագրերի հետ միասին ներկայացվում են մարզպետարան՝ մինչև 2021 թվականի մարտի 10-ը, փետրվարի 2-ի փոխարեն:

ՀՀ 2021 թվականին պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու համար ներկայացվել է սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված **70 սուբվենցիայի ծրագրեր հայտեր, 32 համայնքների կողմից, ընդամենը 4 մլրդ 663 մլն դրամ:**

- Համայնքներն ստացված դիրքորոշումների և դիտողությունների հիման վրա կազմում են սույն կարգի 12-րդ կետի դրույթների համաձայն սուբվենցիայի ամբողջական փաթեթները և ներկայացնում են մարզպետարան մինչև 2020 թվականի հունիսի 5-ը, մայիսի 26-ի փոխարեն:

Սուբվենցիայի ամբողջական փաթեթը ներառում է՝

1) սուբվենցիայի հայտը.

2) համայնքի ավագանու որոշումը, բացառությամբ այն համայնքների, որտեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավագանի չի ձևավորվել,

3)համայնքի ղեկավարի գրությունը,

4)ծրագիրն իրականացնելու նպատակով կազմակերպված հանրային լսումների արձանագրությունը.

5) շինարարական ծրագրերի դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի լրակազմ փաթեթը և (կամ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան կազմակերպված մրցակցային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերը.

6) մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերման դեպքում՝

ա. դրանց տեխնիկական բնութագրերը, ֆինանսական գնահատականները և առնվազն երեք կազմակերպությունների կողմից տրված գնահարցումները և (կամ) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կազմակերպված մրցույթի արդյունքում կնքված պայմանագիրը,

բ. համայնքի ղեկավարի երաշխավորագիրը՝

- դրանց առնվազն 10 տարի ժամկետով շահագործման, սպասարկման ու պահպանման ծախսերը հոգալու և այդ ծախսերը համայնքային բյուջեներում նախատեսելու,

- մատուցված ծառայությունները համայնքի բնակչությանը հասանելի լինելու,

- մատուցված ծառայությունների դիմաց ստացված եկամուտը համայնքային բյուջե մուտքագրելու և այն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղելու վերաբերյալ.

6) մասնավոր հատվածի (կազմակերպություններ, բնակչություն) կողմից համաֆինանսավորման դեպքում տվյալ ծրագրի համաֆինանսավորման հստակ չափի վերաբերյալ տեղեկանքը և (կամ) պայմանագիրը, ինչպես նաև նպատակային ծախսի վերաբերյալ համայնքի ղեկավարի երաշխավորագիրը.

7) տեղեկանք՝ սուբվենցիայի ծրագրի իրականացման համար ֆոնդային բյուջեում նախատեսված գումարի մասին.

8) այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության։

- Ուժը կորցրած է ճանաչվել համայնքներում նախատեսվող մինչև 150.0 մլն դրամ ընդհանուր արժողությամբ ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, նորոգման և հիմնանորոգման աշխատանքների գնման մրցակցային ընթացակարգերի կազմակերպումը մարզպետարի կողմից։
- Կատարվել է պետական բյուջեից տրամադրվող չափաբաժինների փոփոխություն ըստ ոլոտների,
    1. Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում 40%, 55%-ի փոխարեն
    2. Ավելացել է բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում սալարկմամբ, խճապատմամբ՝ 65%

3. Ավելացել է Համայնքների գլխավոր հատակագծերի մշակում՝ 50%, (միկրոռեգիոնալ ծրագրի շրջանակներում ներառվել են)
4. Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում 45%, 40%-ի փոխարեն
5. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում 40%, 60%-ի փոխարեն։

2021 թվականին հանձնաժողովի նիստերում սուբվենցիայի հայտերը քննարկվում են մինչև 2021 թվականի հուլիսի 30-ը։

6. ՀՀ Շիրակի մարզի համայնքներում երեխաների իրավունքների պաշտպանության, հնարավոր դեպքերի կանխարգելման և արձագանքման մասին։

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Լիլիթ Գորգինյան։

2021 թվականի առաջին եռամսյակում բաժինի կողմից իրականացրած աշխատանքների ամփոփումը և վերլուծությունը փաստեց, որ երեխաների տարբեր իրավունքների ոտնահարման դեպքերը կարող են լինել ավելի պակաս քան կան, եթե համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինը իրեն կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի միջոցով պատշաճ իրականացնի ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթները։ Երեխայի կյանքի համապարփակ ուսումնասիրությունը, կարիքի գնահատումը, ապա նաև կարիքի վրա հիմնված անհատական միջամտության պլանը, երեխայի պաշտպանության կարևորագույն գործիքներն են, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումների հիմնավորվածության անհերքելի ապացույցները։ Իհարկե, հասկանալի է, որ ոչ բոլոր համայնքներն ունեն մասնագետ սոցիալական աշխատողներ, ինչը դժվարացնում է ճշգրիտ հերթականությամբ աշխատանքների կազմակերպումը։ Եվ այնուհանդերձ, ցավալի է արձանագրել, որ նաև այն համայնքներում, որտեղ կան սոցիալական աշխատողներ, հանձնաժողովը ոչ միշտ է ականջալուր նրա մասնագիտական կարծիքին։

Երեխաներին վերաբերող բոլոր հարցերը գերզգայուն են, խիստ հուզական. այս ոլորտում զուտ վարչարարությունը գոհացուցիչ լինել չի կարող, կարևոր է որակը և վերջնարդյունքը։ Հարկ եմ համարում նշել, որ երեխայի իրավունքների պաշտպանության կոնցեպտում դետալները դեպքի նկարագրի մեջ առանցքային դեր ունեն, օրինակ՝ երեխայի հանրակրթության մեջ ներգրավված չլինելը կրթական իրավունքի կոպիտ ոտնահարում է, սակայն անհատական դեպքերի քննարկումները ցույց են տալիս, որ երեխայի

պաշտպանության առաջին մակարդակը չի տիրապետում հստակ տեղեկությունների. հիմնական պատճառը պարզված չէ. դա երեխայի ցանկությունն է, թե ծնողի կողմից չարամտորեն կրթության իրավունքի բացառումը, կրթությունը ընդհանրապես չկարևորելը, առողջական խնդիրները, ծնողի հակասոցիալական վարքագիծը, ընտանիքի սոցիալական ծանր վիճակը և այլն։ Նմանօրինակ դեպքերը բազմաթիվ են։ Առաջին եռամսյակում բաժինը 29 դեպք քննարկել է գիշերօթիկների բեռնաթափման կոնտեքստում, 17 դեպք՝ երեխայի և ընտանիքում տարբեր խնդիրներից ելնելով, և 20 բազմամասնագիտական քննարկում է կազմակերպել երեխաների հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ մարզում առկա խնդիրներին լուծում գտնելու նպատակով։

Թույլ է համայնք և բաժին հետադարձ կապը։ Անհերքելի է, որ դրական լուծում ունեցող դեպքի հետ ևս գոնե պասիվ միշտադիտարկում է անհրաժեշտ, որի արդյունքների մասին հարկ է տեղեկացնել բաժնին։

Այնուամենայնիվ փաստ է նաև, որ երեխայի պաշտպանության առաջին և երկրորդ մակարդակների կայուն համագործակցության արդյունքում արձանագրվում են նաև դրական լուծում ստացած շատ դեպքեր։

Բաժինը, իր աշխատառճին անդավաժան, պատրաստ է համայնքներին ցուցաբերել ցանկացած մեթոդական և իրավական աջակցություն։ Մերօրյա բարդ իրականության մեջ, մեր ցավերով ու հոգսերով հանդերձ, կա մեկ պարզ գիտակցում, ցանկացած սկիզբ ձևավորելու, առաջ տանելու, զարգացնելու ճանապարհը չես անցնի առանց ամենաթանկը համարվող մարդկային ռեսուրսի, հետևաբար անժխտելի է, որ բոլորիս հույսն ու ապավենը մեր երեխաներն են, եկեք տքնաջան և գրագետ աշխատանքով այսուհետ փորձենք միմիայն հաջողություններ գրանցել։